ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
**02-ը նոյեմբերի, 2020թ., N42**

ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 02.11.2020Թ. ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝ ***համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել Հայանիստ համայնքի ավագանու՝ 02.11.2020թ. թիվ 12 նիստի օրակարգը՝
1. Հայանիստ համայնքի ավագանու՝ 2019թ. նոյեմբերի 27-ի թիվ 27 որոշման մեջ լրացում կատարելու մասին:

*Ավագանու անդամներ՝*

1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Գրիգորյան Զորիկ
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5. Մկրտչյան Գևորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

02.11.2020թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ
**02-ը նոյեմբերի, 2020թ., N43**

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2019Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 27 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի, 33-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի հանձնարարականը՝ **ավագանին որոշում է՝**

1.Հայանիստ համայնքի ավագանու՝ 2019թ. նոյեմբերի 27-ի՝ «Հայանիստ համայնքի ղեկավարի՝ 2020թ. վարձատրության չափը որոշելու և Հայանիստի համայնքապետարանի աշխատակազմի և Մուտ-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2020թ. թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 27 որոշման թիվ 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումը՝

1)թիվ 1 հավելվածի 2-րդ կետից հետո ավելացնել նոր տող՝ 3-րդ կետով՝ հաստիքի անվանումը, հաստիքային միավորը, պաշտոնային դրույքաչափը սյունակները լրացնելով համապատասխանաբար հետևյալ բովանդակությամբ
«3. «Համայնքի ղեկավարի տեղակալ», «1», «198.000»»:

*Ավագանու անդամներ՝*

1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Գրիգորյան Զորիկ
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5. Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

02.11.2020թ.
գ. Հայանիստ